«ՄԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Համագործակցային ուսուցումը՝ որպես սովորողների կողմից չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացման միջոց
ՀԵՂԻՆԱԿ	Էլմիրա Լևիկի Առաքելյան
ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ	6-րդ խումբ, Հայոց լեզու և Գրականություն
ՂԵԿԱՎԱՐ	Արմինե Ալբերտի Ղազարյան

ՄԵՎԱՆ 2023

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
Դրվածքի ուսումնասիրություն 5
Համագործակցային ուսուցման առանձնահատկությունները 7
Համագործակցային ուսուցման մեթոդները 10
Գործնական համատեքստ 12
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 20
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով: Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը: Դպրոցը ևս ենթարկվում է փոփոխությունների: Այն, ինչ մի ժամանակ թվում էր անփոփոխ և հավերժական, այսօր միայն հարաբերական է: Մեր ժամանակներում ուսուցիչը պետք է դառնա ոչ թե ուսումնական գործընթացի թելադրողը, այլ ուղղորդողի դեր ունենա և հնարավորություն ընձեռի աշակերտներին մտածելու: Ուսուցչի գործը հասարակության մեջ ամենից կարևորվող, ամենամեծ հնարամտություն պահանջող մասնագիտություններից է: Այսօր հաջողության հասնելու համար ուսուցիչներին հարկավոր են աշակերտներին կառավարելու և օգնելու նոր եղանակներ:

Այս առումով հաճախ են հակադրվում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Կրթության ոլորտի աշխատողները գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել, զարգացնել գիտելիքներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են մեզ գիտելիքների աշխարհում բարեկեցիկ կյանքով ապրելու համար:

Միաժամանակ առաջ են եկել ուսուցման նոր մեթոդներ, որոնք ավելի են աջակցում աճող սերնդին կրթելու և դաստիարակելու համար:

Հետևաբար, ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցներում անհրաժեշտ են և պարտադիր ուսուցման և դասավանդման նոր մոտեցումներ:

Այս հետազոտության նպատակն է վերլուծել համագործակցային ուսուցման արդեն իսկ առկա փորձերը և միաժամանակ համեմատել, համադրել Սևանի N5 միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանի աշակերտների հետ կատարած փորձերի հետ:

Հետազոտության նպատակին հասնելու համար սահմանվել են հետևյալ խնդիրները.

Համագործակցային ուսուցմամբ անցկացնել 2 դասաժամ, որոնց ընթացքում

1.Ուսումնասիրել աշակերտների ներգրավվածությունն ու ակտիվությունը դասին:

2.Պարզել՝ արդյոք համագործակցային դասն արդյունավետ ազդեցություն ունեցավ թույլ և ոչ ներգրավված աշակերտների մասնակցությանը դասապրոցեսին:

3.Դիտարկել համագործակցային ուսուցմամբ խմբային մեթոդով դասերը՝նշելով առավելություններն ու թերությունները։

Ակնկալիքները այս հետազոտության արդյունքում մեծ են և կաշխատենք հետազոտման միջոցով վեր հանել նրա դրական կողմերը և հասնել վերջնարդյունքներին։

1.Դրվածքի ուսումնասիրություն

Իմ նպատակն է ուսումնասիրել ժամանակակից մանկավարժության մեթոդների կիրառումն ու արդյունավետությունը դասարանում։

Այդ նպատակին հասնելու համար սահմանում եմ հետևյալ խնդիրները.

1. Համագործակցային ուսուցմամբ անցկացնել դասաժամեր։
2. Ուսումնասիրել աշակերտների ներգրավվածությունն ու ակտիվությունը այդ դասաժամերին։
3. Պարզել՝ արդյոք աշակերտները հասկացան նոր դասը համագործակցային ուսուցմամբ։

Ընտրել եմ համագործակցային դասը՝ որպես ուսուցման ձև և խմբային աշխատանքի միջոցով ցույց կտամ դրա առավելությունները և թերությունները։

Ակնկալիքներն այս հետազոտույան արդյունքում մեծ են և կաշխատեմ հետազոտության միջոցով վեր հանել նրա դրական կողմերը և հասնել վերջնարդյունքներին։

Հետազոտական աշխատանքն իրականացնելու համար ընտրել եմ 6-րդ դասարանի «Մայրենի» առարկայի 2 դասաժամ՝ «Հացը» պատմվածքը,քերականական նյութ՝ «Հոմանիշներ» ։

Դասաժամերը կանցկացվեն համագործակցային ուսուցմամբ։

Համագործակցային ուսուցումը համատեղ սովորելու եղանակ է, երբ խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ներգրավված են ակտիվորեն, և գիտելիքը մշակվում ու հարմարեցվում է վերափոխման միջոցով։ Եթե համառոտ սահմանեմ, ապա համագործակցային ուսուցումը սովորելն է՝ խոսելու միջոցով, երբ մեկը մյուսին օգնում է ըմբռնելու նյութը։ Համագործակցային ուսուցումն ուսուցման այն եղանակն է, որն ի սկզբանե կոչված է վերացնելու բոլորին միաժամանակ սովորեցնելու առումով ավանդական ուսուցման հիմնական թերությունը։ Այսինքն՝ դժվար է և մեծ մասամբ անհնարին, որ ուսուցիչը կարողանա ամբողջ դասարանին միաժամանակ ընդգրկել ակտիվ ուսուցման գործընթացում։ Համագործակցային ուսուցումը փոխում է աշակերտի և ուսուցչի դերը դասարանում։ Դասավանդման և ուսուցման ղեկավարումը բաժանվում է աշակերտների

խմբերի կողմից կամ նրանց միջև։ Աշակերտներն ավելի շատ հնարավորություն են ստանում սովորելու, հարցնելու, միմյանց հետ կիսվելու, ինչպես նաև քննարկելու իրենց գաղափարները։

Համագործակցային ուսուցման կիրառումը սկսվում է դեռևս անտիկ դարաշրջանից։ «Թալմուդը հասկանալու համար պետք է ընկեր ունենալ»,- գրված է Թալմուդում/հրեական կրոնական իրավունքի, առակների, լեգենդների ժողովածու/։ Հռոմեացի փիլիսոփա Սենեկան ասում էր, որ սովորեցնողը կրկնակի է սովորում, իսկ 17-րդ դարում Կոմենսկին հավաստում էր, որ աշակերտները շահում են, երբ սովորում են ուրիշից, նաև երբ սովորեցնում են ուրիշի։18-րդ դարում Լանքաստերը և Բելլը կիրառում էին աշակերտների փոխուսուցումը։

Ուսուցումը հսամագործակցային է, եթե աշակերտները միասին,զույգերով կամ խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդրի լուծման վրա։Ցանկալի է, որ խմբերում ընդգրկվեն տարբեր կարողությունների և մտածողության տեր աշակերտներ։ Այս դեպքում խումբը կարող է առաջարկվող նյութը դիտարկել իր ամբողջ բազմազանության մեջ։ Խիստ կարևոր է խմբում փոխադարձ համագործակցության և փոխօգնության մթնոլորտի ձևավորումը։ Աշակերտները, միմյանց օգնելով,մտքեր փոխանակելով և սովորելու մեջ միմյանց ոգևորելով, ոչ միայն ձեռք են բերում վարքային հմտություններ, այլև անմիջականորեն խթանում են միմյանց ուսումնառությունը,նպաստում ուսման արդյունավետության բարձրացմանը։ Ստացված արդյունքը դառնում է միաժամանակ խմբի յուրաքանչյուր անդամի գիտելիքը և տվյալ խմբի աշխատանքի գնահատման հիմքը։

2. Համագործակցային ուսուցման առանձնահատկությունները

Համագործակցային ուսուցման խմբերը չեն կարող արդյունավետ համագործակցել, եթե աշակերտները չեն տիրապետում համատեղ աշխատանքի համար անհրաժեշտ հաղորդակցական հմտություններին: Ուսուցիչը պետք է նպատակաուղղված կերպով ձևավորի աշակերտների հաղորդակցական հմտությունները, որոնք իրենց մեջ ներառում են ղեկավարման, որոշումներ կայացնելու, փոխվստահության, հաղորդակցվելու, հակասությունների կառավարման և լուծման կարողություններ:

Դասաժամերն անցկացրել եմ համագործակցային ուսուցմամբ: Այն ենթադրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Խմբային աշխատանքը ուսուցման մի ձև է, որտեղ դրսևորվում են խմբի անդամների անհատական առանձնահատկությունները,միաժամանակ ձևավորում են խմբի յուրաքանչյուր անդամին հատուկ կարողություններ և հմտություններ՝ համագործակցելու, դիմացինին լսելու և հարգելու: Համագործակցային ուսուցման ընթացքում շեշտը դրվում է խմբային աշխատանքի վրա: Յուրաքանչյուր աշակերտ, սովորող լինելու հետ մեկտեղ, այդ պահից դառնում է նաև սովորեցնող, ինչն էլ զարգացնում է որոշակի հմտություն, հաղորդակցության կարողունակություն: Այսպիսով՝ կարող ենք ասել, որ համագործակցային ուսուցմամբ դասի հիմնական նպատակը սովորել սովորեցնելն է:

Խմբային աշխատանքի ժամանակ անելիք կարելի է գտնել նույնիսկ ամենաթույլ աշակերտի համար՝ միաժամանակ ոգևորելով նրա կատարած ամենաչնչին աշխատանքը:

Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը: Համագործակցությունն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ,

կազմելու միմյանց կարողությունների և հմտությունների մասին իրական պատկերացումներ:

Հետազոտության միջոցով ցանկանում ենք ուսումնասիրել մեզ համար դեռևս չպարզված հարցեր խմբում աշխատող աշակերտների հարաբերություններում:

Կարևոր մի հարց. արդյո՞ք իրագործելի և իրատեսական են այն բոլոր սահմանումները, որոնք մենք ուսումնասիրել ենք համագործակցային ուսուցման ժամանակ:

Համագործակցային ուսուցման հիմքում ընկած են հիմնականում 3 տեսություններ՝ սոցիալական փոխկապակցվածություն, ճանաչողական զարգացում, վարքագծային ուսումնառություն:



Գծապատկեր 1. Համագործակցային ուսուցման տեսություններ

1. Սոցիալական փոխկապակցվածության տեսության ներկայացուցիչները /Կուրտ-Կաֆկա, Լևին/ խումբը դիտում են որպես դինամիկ ամբողջություն, որտեղ շեշտադրվում է ընդհանուր նպատակից բխող փոխկապակցվածությունը: Այսինքն՝ խմբի անդամներից մեկի վիճակի փոփոխությունը հանգեցնում է մյուսների վիճակների փոփոխության,իսկ ներխմբային լարումը հանգեցնում է խմբի

ընդհանուր նպատակի իրականացմանը: Խմբում սոցիալական փոխկապակցվածության գաղափարը ամբողջացրել են Ջոնսոն եղբայրները:

2. Ճանաչողական զարգացման տեսությունն իր հիմքում ներառում է Պիաժեի, Վիգոտսկու, Բրունների հայացքները: Ըստ Վիգոտսկու՝ գիտելիքին հատուկ է սոցիալական որոշակի բնութագիր, և դա ծնվում է ծագած խնդիրների լուծման ընթացքում՝ գործադրած համատեղ ջանքերով: Նյութը վերաշարադրելու կամ վերապատմելու ընթացքում որոշակի փոփոխություններ են կատարում: Հետևաբար, ըստ Վիգոտսկու, մտավոր աշխատանքի լավագույն ձևը սովորածը ընկերոջը բացատրելն է:
3. Վարքագծային ուսումնառության տեսության կողմնակիցները շեշտադրում են խմբային աշխատանքի արդյունքի խրախուսումը, որը շարժառիթ կամ դրդապատճառ է դառնում ուսուցման գործընթացի համար: Սքիները մշակել է ծրագրավորված ուսուցման մի ձև, ըստ որի ուսումնական նյութը բաժանվում է տրամաբանական հաջորդականություն ներկայացնող փոքրիկ մասերի՝ քայլերի: Աշակերտները, պատասխանելով համեմատաբար պարզ և հեշտ մի քանի հարցերի, ստանում են խրախուսանք, ինչն էլ դառնում է ուսուցման գործընթացը շարունակելու և նյութն ամբողջությամբ յուրացնելու կարևոր խթան:

3. Համագործակցային ուսուցման մեթոդները

Դասաժամերն անցկացրել եմ համագործակցային ուսուցմամբ՝ կիրառելով համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ՝ խմբային աշխատանք, խճանկար, շրջագայություն պատկերասրահում, 5 րոպեանոց ազատ շարադրանք, աշակերտների թիմային առաջադիմություն, երեք բանալի և մեկ կողպեք:

Գծապատկեր 2. Իմ օգտագործած մեթոդները

Այստեղ տեղին է հիշել հայտնի մանկավարժ Սկատկինի խոսքերը, ըստ որի մեթոդը ճանապարհ է, որով ուսուցիչն աշակերտին տանում է անգիտությունից դեպի գիտելիք, անկարողությունից դեպի կարողություն,նրա զարգացման ուղի:

Այսինքն՝ աշակերտներին դեպի գիտելիք և լուսավոր աշխարհ տանելու համար մեզանից յուրաքանչյուրը կարող է օգտագործել բազմաթիվ և բազմապիսի մեթոդներ, որոնք պետք է պլանավորել և իրականացնել այնպես, որ աշակերտներին մղի համագործակցության և նպաստի նրանց ակտիվ մասնակցությանը ուսուցման գործընթացին:

Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: Ուսուցիչն այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու

հնարավորություն ընձեռել: Համագործակցային մեթոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն, և այդ դերը լի է մարտահրավերներով:

Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար: Խմբերին անհրաժեշտ է բավական ժամանակ միմյանց հետ ազատ և հարմարավետ զգալու համար:

Ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է. ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մոտեցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը:

Համագործակցային ուսուցման ժամանակ ուսուցիչը պետք է ներկայանա որպես դիտարկող և միաժամանակ աջակցող, ում հնարավորություն է ընձեռվում ձևավորել աշակերտների խմբերն այնպես, որ նրանց տեղաբաշխումը ճիշտ և նպատակային լինի, որպեսզի վերջնարդյունքում նպաստի աշակերտների սոցիալական հմտությունների և կարողունակությունների զարգացմանը:

4.Գործնական համատեքստ

Հետազոտական աշխատանքս իրականացրել եմ 6-րդ դասարանում,որտեղ սովորում են 6 աշակերտ՝ 1 տղա և 5 աղջիկ։ Ընտրել էի 2 դասաժամ՝ <<Հացը>>, քերականական նյութ <<Հոմանիշներ>>։ Ցանկալի նպատակների և վերջնարդյունքների հասնելու համար նպատակահարմար եմ գտել այս դասերը համատեղել։

Դասարանը բաժանել եմ 3 խմբի՝ 2-ական աշակերտ։ Խմբերի բաժանումը կատարել եմ խառը եղանակով՝ ներգրավելով ակտիվ և պասիվ աշակերտների։

<<Հացը>> պատմվածքի բաժանումը կատարել եմ հետևյալ կերպ. օգտագործելով <<Խճանկար>> մեթոդը՝ յուրաքանչյուր խմբի հանձնարարվեց պատմվածքի մեկ հատված և աշխատելու համար որոշակի ժամանակ։Խմբերը պետք է կարդային իրենց հանձնարարված հատվածը,բացատրեին նորածանոթ բառերը,դուրս գրեին այդ հատվածի ուղղագրական արժեք ներկայացնող բառերը,դրանցով կազմեին նախադասություններ։

Իմ նպատակն էր, որ աշակերտները կարողանային ինքնուրույն աշխատել,կարողանային սովորել սովորեցնել միմյանց, ինքնուրույն դատողություններ և եզրահանգումներ անել։ Լավ կազմակերպված խմբային աշխատանքը մեծապես ազդում է աշակերտների անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա։

Այսպիսով՝ յուրաքանչյուր խումբ սովորեց դասի մեկ հատվածը, բայց արդյունքում 3 խմբի աշակերտները, դադարեցնելով իրենց աշխատանքը և լսելով մյուս խմբերի պատասխանները, սովորեցին ամբողջ դասը։ Իմաստի ընկալման փուլում օգտագործեցի նաև <<Երեք բանալի և մեկ կողպեք>> մեթոդը, քանի որ <<Հացը>> պատմվածքի տեքստը ծավալուն էր։ Աշակերտներին առաջարկեցի տեքստից դուրս գրել երեք բանալի բառեր կամ նախադասություններ, որոնք կարևոր էին այդ տեքստը յուրացնելու, հասկանալու համար, ապա տեքստից ընտրել մեկ բառ կամ նախադասություն, որը կամփոփեր, կընդհանրացներ իրենց ասելիքը, միտքը, հիմնական գաղափարը։ Աշակերտները ակտիվորեն կատարեցին աշխատանքը՝ դուրս գրելով երեք բանալի և մեկ կողպեք բառերը և նախադասությունները.

ա/ հոգատար ծնողներ/լավ հայրիկ,լավ մայրիկ/

բ/ անբան,ծույլ որդի

գ/ որդու հնարած սուտը

դ/ Ես արժանի չէի դրանք ուտելու, դրանք զգալու, դրանց նայելու, դրանք լսելու…ես արժանի չէի նույնիսկ մի կտոր հացի…

Համագործակցային նպատակով օգտագործեցի նաև «Շրջագայություն պատկերասրահում» մեթոդը, որի նպատակն էր միմյանց փոխանակել տեղեկություններ այդ պատմվածքից, այնուհետև մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, ցածրաձայն խոսելու, իրենց աշխատանքը ներկայացնելու բազմապիսի հմտություններ և կարողունակություններ։

Պետք է նշեմ, որ համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք պետք է ուղղված լինեն աշակերտների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը։ Կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն այդ հմտություններին տիրապետելը, այլև դրանք արժևորելը և կյանքում դրանք համապատասխան իրավիճակներում կիրառելը։ Ուստի մեզանից յուրաքանչյուրի խնդիրն է մեր դասաժամերին համագործակցային ուսուցման շնորհիվ մեր աշակերտների մոտ ձևավորել այնպիսի որակներ, զրանցել այնպիսի հմտություններ, որոնք համահունչ կլինեն կրթության ժամանակակից պահանջներին, իսկ արդեն մեր դպրոցի շրջանավարտը կրթական հաստատությունում ձեռք բերածը կկարողանա կիրառել կյանքում։

Որպես ուսուցիչ՝ համոզված եմ, որ մի դասի ընթացքում միանգամից չենք կարող օգտագործել համագործակցային ուսուցման մեթոդների հարուստ զինանոցը։ Պետք է յուրաքանչյուր դասի համար կատարել ուսուցման մեթոդի, հնարի ընտրություն։ Ուսուցման մեթոդի հիմքում ընկած են այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում. բացի դասի նպատակից և խնդիրներից մեթոդների ընտրությունը կախված է նաև

ա/ դասի տիպից և կառուցվածքից

բ/ ուսումնական նյութի բովանդակությունից

գ/ աշակերտների տարիքից

դ/ դասարանում աշակերտների թվաքանակից

ե/ աշակերտների պատրաստվածության մակարդակից

զ/ աշակերտներիշահագրգռվածությունից և հետաքրքրությունից

է/ ժամաքանակից

ը/ ուսուցչի պատրաստվածության մակարդակից

Եվ այսպիսով՝ համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը,օգնում է ուսուցչին հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման, արժևորման համար, ինչպես նաև բարելավում է խմբային աշխատանքը։

Առաջին դասիս թեման է «Հացը» պատմվածքը և քերականական նյութը՝ «Հոմանիշներ»։ Դասիս նպատակն էր ուսուցանվող թեմայի վերաբերյալ խմբային աշխատանքի շնորհիվ գիտելիքների ձեռքբերումը.

ա/ներկայացնել պատմվածքի հիմնական գաղափարը,սյուժեն,կառուցվածքը

բ/ վերաշարադրել պատմվածքի բովանդակությունը

գ/ գրել խորհուրդ նամակ գլխավոր հերոսին

դ/ ընդհանուր բառաշարքից առանձնացնել իմաստով մոտ բառերը

Վերջնարդյունքները պետք է լինեն աշակերտների կողմից պատմվածքի ուսումնասիրություն։ Աշակերտները կկարողանան.

ա/ վարժ կարդալ պատմվածքը՝երկխոսությունները կարդալով դերերով

բ/ առանձնացնել բանալի բառերը և նախադասությունները

գ/ ձևակերպել հարցեր ընթերցածի շուրջ

դ/ գրավոր կամ բանավոր բնութագրել գլխավոր հերոսին

ե/ արտահայտել ինքնուրույն տեսակետ

զ/ տարբերել հոմանիշները

Առաջին դասի համար նախատեսել էի դասապրոցեսը սկսել դաս-առաջադրանքով, որն էլ աշակերտներից պահանջելու էր այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք էին

ինքնակառավարումը, ինքնակազմակերպումը, ինքնագիտակցումը։ Աշակերտների համար հիմնական նպատակն ու խնդիրը դառնալու էր տեքստի ավարտին հասնելը, հետ չմնալը կամ չշեղվելը։ Նրանք դասը կարդացին շղթայական հաջորդականությամբ։

Աշակերտը հստակ պիտի պատկերացնի, թե ինչ է իրենից պահանջվում, որպեսզի ուսուցիչն առավել արդյունավետ իրականացնի իր հետազոտությունը։

Այնուհետև խմբերով կազմակերպեցինք մտքերի փոխանակություն, նյութի քննարկում, որն օգնեց նրանց պատմելու ընթացքում /զույգերով միմյանց ներկայացրին իրենց ընթերցածը, միմյանց ուղղեցին հարցեր այդ հատվածի վերաբերյալ. մի խոսքով՝ վերհիշեցին իրենց անցածը/։

Նոր նյութին ծանոթանալուց հետո անցկացրինք զույգերով հարցադրում, որի հիմնական նպատակն էր ուշադրության կենտրոնացումը, պատասխանատվության զգացում ունենալը։ Աշակերտների պատասխաններից և ակտիվ մասնակցությունից պարզ դարձավ նոր նյութի ընկալման մակարդակը։

Այնուհետև հանձնարարեցի խմբերին տանը փնտրել և գտնել տվյալ նյութի վերաբերյալ տարբեր տեղեկություններ խմբային աշխատանքը ավելի հետաքրքիր և արդյունավետ անցկացնելու նպատակով։

Ներքոնշյալ դիագրամը վերաբերում է առաջին դասի ներգրավվածության մակարդակին.

Դիագրամ 1. Աշակերտների ներգրավվածության մակարդակը, %



Երկրորդ դասաժամին խմբերը ներկայացրին իրենց հանձնարարված թեմաները: Խմբերից յուրաքանչյուրը ներկայացրեց իր նյութը, որի ընթացքում մյուս խմբերի աշակերտները լսեցին և յուրացրին մյուս խմբերի թեմաները:

Այնուհետև կատարեցի անդրադարձ, աշակերտները գնահատվեցին: Նյութը ավելի լավ յուրացնելու համար հանձնարարեցի ընթերցել զուգահեռ խմբի աշխատանքը, որի նպատակն էր ավելի իմանալը, միաժամանակ համեմատելու հմտությունը և կարողունակությունը զարգացնելը:

Դիագրամ 2. Աշակերտների ակտիվության ցուցանիշ, %



Համագործակցային ուսուցման ընթացքում ստեղծվում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային և անհատական ուսուցման եղանակները:

Լավ կազմակերպված խմբային աշխատանքը մեծապես ազդում է աշակերտների և՛ անհատականության, և՛ արժեքային համակարգի ձևավորման վրա՝

- միասին մտածել
- համագործակցությունը
- հարմարվելու ունակություն
- փաստարկներ բերելու ունակություն
- դիմացինի նկատմամբ հարգանք
- հանդուրժողականություն
- խմբի մաս լինելու փորձ

Իմ հիմնական նպատակն է, որ աշակերտները կարողանան աշխատել ինքնուրույն, անել ինքնուրույն դատողություններ և եզրահանգումներ, կարողանան սովորել սովորեցնել: Եվ ամենակարևորը՝ ակնկալում եմ ստանալ վերջնարդյունքներ:

Համագործակցային ուսուցումը ուսուցիչների և աշակերտների հարաբերությունները դիտում է նոր մակարդակում, առավել մարդասիրական վստահության հիմքերի վրա: Համագործակցության մեջ կարևորվում է ակտիվ լսելու դերը: Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Աշակերտների ողջ ջանքերը ուղղվում են ընդհանուր նպատակին հասնելուն, ինչն էլ նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը:

Երրորդ դասաժամին խմբերից յուրաքանչյուրը ներկայացրեց մյուս խմբի աշխատանքը: Ես և մյուս խմբի անդամները հետևեցինք, թե որքանով է այդ նյութը յուրացրել մյուս խումբը: Քանի որ նյութի վերաբերյալ արդեն ունեին բավականին տեղեկություն թե՛ դասագրքից, թե՛ համացանցից, թե՛ ուսուցչից, գրեցինք գրավոր աշխատանք «Հացը» և հոմանիշներ թեմայով, որտեղ անդրադարձանք և՛ ստեղծագործությանը, և՛ քերականական նյութին:

Խթանման փուլում կիրառեցի մտքերի տարափ մեթոդը. գրատախտակին գրեցի «հաց» գլխաբառը և հանձնարարեցի լրացնել հացին վերաբերող և բնութագրող բառեր։Այնուհետև առաջադրեցի մի քանի հարցեր, որոնց աշակերտները ակտիվ պատասխանեցին՝ միմյանց լրացումներ անելով։ Ցածր ակտիվություն ունեցող աշակերտների մոտ նկատվեց առաջընթաց. վերջիններս ավելի ակտիվ էին ու նախաձեռնող, կարողացան ինքնուրույն վերարտադրել իրենց մտքերը։

Դիագրամ 3. Ցածր ակտիվություն ունեցող աշակերտների ակտիվության բարձրացում, %



Դասաժամերի ընթացքում աշակերտները կիրառեցին «Փոխներգործուն գրառումների համակարգ» մեթոդը, որը արդյունավետ է կարդալու միջոցով նյութի ընկալման ընթացքը վերահսկելու համար։ Արդյունավետ կարդալու և մտածելու գրառումների համակարգը իմաստի ընկալման փուլի արդյունավետ մեթոդական հնար է, որն օգնում է աշակերտներին տեքստը կարդալու ընթացքում վերահսկել սեփական ընկալումը։

Այս մեթոդի էությունն այն է, որ ընթերցելով նյութը՝ աշակերտները կատարում են նշումներ՝ օգտվելով «Փոխներգործուն գրառումների համակարգ» մեթոդի հետևյալ նշաններից.

v= հաստատում եմ իմ իմացածը, գիտեմ

+- նոր տեղեկություն է, չգիտեմ

-իմ իմացածին հակասում է

?=անհասկանալի է

/=հետաքրքիր է, կարելի է քննարկել

Կարող եմ վստահ ասել, որ այս նշանների օգտագործումը տեքստի ընթերցանության ընթացքում էլ ավելի նպաստեց ուսուցմանը՝ նորը, հասկանալին և հակասականը ընդգծելու առիթով:

Այնուհետև խմբերով կազմակերպեցի մտքերի փոխանակություն, նյութի քննարկում, որը օգնեց պատմելու ընթացքում: Խմբային աշխատանքի ընթացքում հետևեցի նրանց կատարած աշխատանքներին և հարցեր ծագելու դեպքում ուղղորդեցի նրանց:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարելով այս հետազոտությունը՝ եկա այն եզրահանգման,որ

1. համագործակցային ուսուցման դասեր պետք է անցկացնել հաճախակի, նպատակը՝ աշակերտները ներգրավված կլինեն դասապրոցեսին
2. համագործակցելով՝ աշակերտները միասին են մտածում միևնույն հարցի շուրջ, յուրաքանչյուր աշակերտ սովորող լինելու հետ մեկտեղ դառնում է սովորեցնող

Համագործակցային ուսուցմամբ անցկացրած դասաժամերին ես եկա այն համոզման, որ համագործակցային ուսուցումը նպաստում է աշակերտների ակտիվ մասնակցությանը դասին՝ նրանց մեջ զարգացնելով աշխատասիրություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն,ապրումակցելու,աջակցելու,փոխըմբռնելու կարողունակություն։

Փորձը ցույց տվեց, որ եթե ուսուցիչը համագործակցային ուսուցմամբ խմբային աշխատանքներ հաճախակի կազմակերպի, ապա դասարանում միշտ կտիրի ընկերական, միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ։ Որպեսզի աշակերտները սովորեն իրենց հնարավորությունների առավելագույն չափով, անհրաժեշտ է նրանց սովորել սովորեցնել, օգնել հավատալ իրենց, իրենց ունակություններին։ Համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար, (Խաչատրյան, 2020) (Համագործակցային ուսուցում, 2006)ինչը ևս այսօր կրթական բարեփոխումների կարևոր պահանջներից է։

Գրականության ցանկ

Ափոյան, Ա. (2008). *Համագործակցային ուսուցում.* Երևան.

Իսկանդարյան, Ա. (2008). *Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ.* Երևան.

Խաչատրյան, Ս. (2020). *Ուսուցման արդյունավետ հնարներ .* Երևան.

Համագործակցային ուսուցում. (2006). Երևան: Անտարես.